

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Դ Ի Տ Կ Մ Տ Տ Ի Ի

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ՎԵՑՕՐԵԱՅՔԻ»
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԸ:

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բարսեղ Կեսարացու (329—379 թթ.) «Վեցօրեայ արարչութեան» մեկնությունը պատկանում է հայ թարգմանական գրականության ամենանշանավոր հուշարձանների թվին, հանդիսանալով նման բնույթի երկասիրությունների դասական օրինակը: Մենդոց գրքի առաջին գլուխներին նվիրված «Վեցօրեայ արարչութեան» մեկնությունները Լ. Խաչիկյանի բնորոշմամբ՝ «միջնադարում կատարում էին գիտական հանրագիտարանների դեր, որոնց ատաղձը հանդիսանում էր քրիստոնեական աստվածաբանությունը և անտիկ գիտությունն ու փիլիսոփայությունը»²: Նպատակ ունենալով շարադրելու աշխարհաստեղծման քրիստոնեական պատկերացումը՝ «Վեցօրեայ» մեկնությունները շոշափում են բազմաթիվ հարցեր, կապված երկնքի և երկրի կառուցվածքի, երկնային մարմինների հատկությունների, օդերևութաբանական երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի օրինաչափությունների հետ: «Այսպիսով, առանձին գիտական բնագավառների բացակայության պայմաններում, — շարունակում է Լ. Խաչիկյանը, — այդ գրքի մեկնությունները կոչված էին բավարարելու ընթերցող շրջանների ծարավը բնագիտության, տիեզերագիտության, կենդանաբանության, բուսաբանության և այլ գիտությունների գծով»³: Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքն» այգ իմաստով նշանակալից դեր է կատարել միջնադարյան հայ բնագիտության ու տիեզերագիտության զարգացման գործում՝ որոշակի հետք թողնելով Եզնիկ Կողբացու, Անանիա Շիրակացու և այլ մտածողների գիտական ժառանգության մեջ:

Հետադոտողների միահամուռ կարծիքով «Վեցօրեայքը» հայերեն է թարգմանվել V դարի առաջին կեսին, հայ թարգմանիչների ավագ սերնդի ներկայացուցիչներից մեկի ձեռքով⁴: Դրա վկայությունն են նախ՝ թարգմանության գասական լեզուն, որն աչքի է ընկնում ընտիր հայկաբանությամբ, երկրորդ՝ այն

1 Համառոտագրություններ. ¹—«Վեցօրեայքի» հայերեն բնագիրը. տե՛ս «Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացոց ճառք վասն Վեցօրեայ արարչութեանն» (աշխատասիրությամբ Արսեն Բաղրատունու). Վենետիկ, 1830: BC—«Վեցօրեայքի» հունարեն բնագիրը. տե՛ս Basile de Césarée. Homélie sur l'Hexaéméron, texte grec, introduction et traduction de Stanislas Giet. 2^e éd., Paris, 1968 BM—«Վեցօրեայքի» ասորերեն բնագիրը. տե՛ս British Museum, Add. Syr. 17143, fol. 1r—12r.

2 Լ. Խաչիկյան. Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը. Երևան, 1945, էջ 161 (անտիպ):

3 Նույն տեղում:

4 «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության բանասիրական խնդիրներին վերաբերող բուրր կարծիքները բարեխղճորեն ի մի են բերված Կ. Մուրադյանի մենագրության մեջ. տե՛ս Կ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացիի և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ. Երեվան, 1976, էջ 169—204:

հանգամանքը, որ Եզնիկ Կողբացին ազգվել և օգտվել է մեկնության հայերեն բնագրից⁵։

Հայագետների կարծիքը նույնքան միասնական է նաև այն հարցում, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը զգալիորեն շեղվում է հունարեն բնագրից, փաստ, որի վրա դեռևս 1830 թ. ուշադրություն է հրավիրել հայերեն բնագրի հրատարակիչ Արսեն Բագրատունին. «Այնպիսի ազատօրէն համարձակութեամբ ճախր առեալ սլանայ հայ թարգմանիչս, մինչ զի յուով ուրիշ անմարթ էր նշմարել զնա ընդ հետս շաղագք բնագրին, և բանիցն թեւ ոչ ինչ լուծումն շնորհէր»⁶։ «Նոր Հակագլան բառարանը» թարգմանությունը բնութագրում է «կարի ընդարձակեալ ոճով՝ ըստ իմաստից ևեթ յարմարեալ յոյն բնագրին» խոսքերով⁷։ Ըստ Գ. Նահապետյանի՝ «հայերեն թարգմանությունը ազատ և ըստ հաճույս ընդլայնած է բնագրի խոսքերը և երբեմն նաև իմաստները»⁸։ Ա. Սուքրյանը մի քանի օրինակներով ցույց տալով հայերեն և հունարեն բնագրերի հսկայական տարբերությունները, ավելացնում է. «Եթե ասոր նման և ասոնցմեալ ավելի այլևայլալ օրինակներ ուզեինք բերել, զրեթե Վեցօրեից մեծ մասը հարկ կըլլար օրինակել»⁹։ Զ. Թորոսյանը իրավացիորեն թարգմանության նրման ևղանակտ բացատրություն է համարում V դարի հայ մատենագրության համար. «Մեր Ե գարու բոլոր թարգմանիչներու մեջ՝ ինքնատիպ բան մ'ունի Վեցօրեից թարգմանիչը։ Անոնք ընդհանրապես, շափազանց հավատարիմ զըտնըվելով բնագրին հուն և հմուտ խորապես հույն լեզվին բոլոր լեզվական և քերականական նրբություններուն, կրցեր են հայացնել Ս. Գիրքը և Ս. Հարց գրությունները դասական ընտիր, վայելուչ և հստակ լեզվով. իսկ մեր թարգմանիչը, առանց հեռանալու բնագրին իմաստեն, կ'ոտնուէ կ'անցնի բուն թափով մը լեզվական և քերականական կանոններու վրայեն, և հետ կարդալու հեղինակին ամբողջ պարբերություն մը կամ հատված մը, կ'յտրացնեն և կը զրոշմեն հոգիովն մեջ անոր միտքը, և այգ ազդեցություն տակ՝ կ'արտահայտեն ունեցած տպավորությունը»¹⁰։ Այլ կերպ ասած, ըստ Լ. Թորոսյանի՝ հայ թարգմանիչը ոչ թե թարգմանել, այլ փոխադրել կամ վերաշարադրել է «Վեցօրեայի» հունական բնագիրը։

«Վեցօրեայի» հայերեն թարգմանության այս յուրահատկությունը տարբեր բացատրություններ է ստացել բանասերների կողմից։ Ըստ Ա. Սուքրյանի՝ հայերեն բնագրի շեղումները հունարենից բացատրվում են թարգմանչի բանաստեղծական հակումներով¹¹։ Զ. Թորոսյանը դրա հիմնական պատճառն է համարում թարգմանչի կողմից հունարեն լեզվին բավարար չափով չտիրապետելու հանգամանքը. «Մեր թարգմանչին թերևս միակ տկար կողմն է՝ հիմնապես հմուտ չըլլալը հույն լեզվին,— գրում է նա»¹²։ Կ. Մուրադյանը, հաշվի նստելով բերված տեսակետների հետ, միաժամանակ նշում է, որ «բնագրի այս կամ այն բացատրության ընդլայնման, թարգմանության ընդարձակման ու

5 «Վեցօրեայի» և Եզնիկի բնագրական աղբյուրները հանգամանալից կերպով վեր են հանված Զ. Թորոսյանի և Կ. Մուրադյանի կողմից. տե՛ս Զ. Թորոսյան. Ս. Բարսեղ Կեսարացի. իր «Վեցօրեայ» ճառերը և հայ թարգմանությունը.— «Բաղմավեպ», 1934, էջ 419—422; Կ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացի..., էջ 205—209։

6 ԲԿ, Ճառաջարան։

7 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն... Զ. Գաբրիէլի Աւետիքեան, Զ. Խաչատրոյ Սիրմէլեան, Զ. Մկրտչի Աւգերեան. հ. 1, Վենետիկ, 1836, էջ 19։

8 Գ. Նահապետյան. Ս. Բարսեղ Կեսարացի «Յաղագս վեցօրեայ ատուրց արարչութեան».— «Բաղմավեպ», 1907, էջ 395։

9 Ա. Սուքրյան. Սուրբ Բարսեղ և իր երկասիրությունը.— «Բաղմավեպ», 1873, էջ 124։

10 Զ. Թորոսյան. Ս. Բարսեղ Կեսարացի..., էջ 332։

11 ՏԼՆ Ա. Սուքրյան. Սուրբ Բարսեղ..., էջ 123։

12 Լ. Թորոսյան. Ս. Բարսեղ Կեսարացի..., էջ 334։

թարգմանչի ընդմիջարկման բազմաթիվ օրինակները... թերևս պետք է բացատրել գործի տեղայնացման միտումով¹³:

Ի տարբերություն բանասերների այս խմբի, որը «Վեցօրեայքի» հայերեն թարգմանությունը կապում է հունական նախօրինակի հետ և որի փաստարկներին մենք կանգրադառնանք սույն աշխատության վերջում, հետազոտողների մի այլ խումբ հայերեն և հունարեն բնագրերի ակնհայտ անհամաձայնությունը բացատրում է այն հանգամանքով, որ հուշարձանն ամենայն չավանականությամբ հայերեն է թարգմանվել ասորերենից: «Հայն չափազանց շատ կը շեղի (հույն բնագրեն). ասոր պատճառն ասորի բնագիրն ըլլալու է,— գրում է Լ. Տաշյանը»¹⁴: «Հայերեն թարգմանությունն ունի ընդհանուր նույնություն հունարենի հետ, բայց լի է տարբերություններով, որոնք ասորերեն բնագիր մը ենթադրել կու տան,— կրկնում է Թ. Թոռնյանը»¹⁵: Լ. Տաշյանի և Թ. Թոռնյանի տեսակետին միանում են նաև Ն. Բյուզանցյանը, Ն. Անդրիկյանը, Ե. Դուրյանը և Ի. Դրիեսսենը¹⁶: Այս կարծիքը, սակայն, առայժմ հայագիտության մեջ մնացել է սոսկ որպես ենթադրություն, առանց համապատասխան բնագրագիտական և բանասիրական հիմնավորման: Դա բացատրվում է այն պարզ պատճառով, որ հետազոտողներն իրենց ձեռքի տակ չեն ունեցել «Վեցօրեայքի» դեռևս անտիպ ասորական բնագիրը:

Ըստ Ա. Բաումշտարկի՝ «Վեցօրեայքի» ասորական բնագիրը պահպանվել է Բրիտանական թանգարանի № 17143 (V դ.) և Մինայի Սուրբ Կատարինեի վանքի № 9 (IX դ.) ձեռագրում¹⁷: Երկու ձեռագրերն էլ, սակայն, մեզ են հասել թերի վիճակում. Մինայական ձեռագրից պահպանված են վերջին թերթերը. իսկ Բրիտանական թանգարանի ձեռագրից՝ «Վեցօրեայքի» առաջին վեց ճառերը և յոթերորդ ճառի մեծագույն մասը¹⁸: Վերջերս անգլիահայ բանասեր Վրեժ Ներսիսյանի սիրալիր օժանդակությամբ Մաշտոցի անվան Մատենադարանն ստացավ Բրիտանական թանգարանի ձեռագրի 1ա—12ա էջերի լուսապատճենը¹⁹, որը, դժբախտաբար, բավականին դժվարընթեռնելի է: Ինչպես նշվեց, Բրիտանական թանգարանի № 17143 ձեռագրում «Վեցօրեայքի» առաջին վեց ճառերը չեն պահպանվել: Յոթերորդ ճառի վերջամասից մնացել է մի կիսաջինջ հատված, որը զբաղեցնում է ձեռագրի 1ա—1բ էջերը: Ութերորդ ճառը պահպանվել է ամբողջությամբ (էջ 1բ—7ա): Իններորդը նույնպես պահպանվել է ամբողջությամբ (էջ 7ա—12ա), սակայն վերջին էջը կիսապատռ և կիսաջինջ է. բնագիրն ընթեռնելի է մինչև հայերեն թարգմանության հրատարակության 199-րդ էջի 34-րդ տողը:

13 Կ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացին..., էջ 201, 203:

14 Լ. Տաշյան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Վիեննա, 1895, էջ 640:

15 Թ. Թոռնյան. Հատրնտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց. հ. Բ, Վիեննա, 1910, էջ 9:

16 Տէս Ն. Բյուզանցի. Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք. Տփղիս, 1900, էջ ԻԳ, 30: Ն. Անդրիկյան. Գեղեցիկը լեզվին մեջ.— «Բաղմավեպ», 1907, էջ 512, 516: Ե. Դուրյան. Պատմություն հայ մատենագրության. Երուսաղեմ, 1933, էջ 23: Ի. Դրիեսսեն. Ս. Բարսեղի հայ ձեռագրերնրու հավաքածուն (թարգմ. Բ. Զրաբյանի՝ «Museum», 1953, t. 66, p. 65—95-ից).— «Բաղմավեպ», 1954, էջ 285:

17 Տէս A. Baumstark. Geschichte der syrischen Literatur mit Ausschluss der christlich-palästinensischen Texte, Bonn, 1922, S. 78.

18 Բրիտանական թանգարանի № 17143 ասորական ձեռագրի նկարագրությունը տվել է Վ. Ռայտը իր կազմած ձեռագրացուցակի 546-րդ համարի տակ. W. Wright. Catalogue of Syriac Manuscripts in the British Museum. Part II., London, 1871, p. 416.

19 Հարկ ենք համարում այդ առթիվ խորին շնորհակալություն հայտնել հարգարժան գիտնականին:

ինչպես տեսնում ենք, «Վեցօրեայի» ասորական բնագրի մեր ձեռքի տակ եղած մասն այնքան ծավալուն է (հայերեն թարգմանության մեկ քսաորորդը), որ միանգամայն բավարար է բնագրական հանգամանալից համեմատություններ կատարելու և համապատասխան եզրակացությունների հանգելու համար: Այսպես.

Հունարեն բնագիր	Ասորերեն քարգմ.	Հայերեն քարգմ.
<p>Τα ὅτι ἐν ἑσθῆρα οὐ μόνον ἄφωνα, ἀλλὰ καὶ ἀντιμερα, καὶ ἀδύναστα, καὶ πρὸς τασαν βίου κοινωνίαν ἀνθρώποις ἀμεταχειρίστα. "Ἐγὼ βούθ τον κηραμενον καὶ ὄνος τῆν φαντην τοῦ κούριου αὐτοῦ.</p> <p style="text-align: right;">[BC 432]</p>	<p>rxš' dyn d-b-ym' l' hw' d-l' ql' b-lxwd 'ytwhy b-xywth 'l' 'p d-l' 'yd' q'm šyd mn d-mtqrb lh. w-l' l-ywlprn' d-n't' mšk-xy' w-l' l-xwltn' d-byt bnynš' mtqrb b-šwəš' 'l xywt' dyn d-b-'r' 'myr' d-yd' lm twr' qnyh w-xmr' 'wry' d-mrh.</p> <p style="text-align: right;">[BM 2ra]</p>	<p>Բայց չրային և ծովային զեռունքն ոչ միայն բարբառս ոչ ունին կենդանութեանն, այլ և ոչ համբար բնդ այնմ՝ որ մերձենայցեն ի նոսա. և ոչ յուսումն գալ յօժարին և ոչ ի հողորդութիւն և ի կերպարանս մարդկան: Իսկ զցամախային և զերկրաւոր անասունցս ասացեալ է, թէ ծանեալ եզն զստացիչ իւր, և էշ զմսոր տեանն իւրոյ²⁰:</p> <p style="text-align: right;">[ԲԿ 158]</p>

Այս փոքրիկ հատվածի քննությունն անգամ հնարավորություն է տալիս ակնհայտորեն տեսնելու ասորերեն և հայերեն թարգմանությունների էական ընդհանրությունները՝ ի հակադրություն «Վեցօրեայի» հունարեն բնագրի: Այսպես.

ա. Հունարեն բնագրում բացակայում է ասորերեն և հայերեն թարգմանությունների զեռունքն (rxš') բառը:

բ. Ասորերեն և հայերեն թարգմանություններն ունեն «բարբառս ոչ ունին կենդանութեանն» նախադասությունը հունարեն բնագրի մեկ բառի դիմաց (ἄφωνα):

գ. Ասորերեն և հայերեն թարգմանություններն ունեն «ոչ համբար ընդ այնմ՝ որ մերձենայցեն ի նոսա» ընթերցվածը հունարեն բնագրի մի այլ՝ ὀντιμερα բառի փոխարեն:

դ. Հունարեն բնագրի ἀδύναστα բառի դիմաց ասորերեն և հայերեն թարգմանություններում դրված է, «ոչ յուսումն գալ յօժարին»:

ե. Հունարեն բնագրում բացակայում է ասորերեն և հայերեն թարգմանությունների «իսկ զցամախային և զերկրաւոր անասնոցս ասացեալ է» նախադասությունը:

Ասորերեն և հայերեն թարգմանությունների համապատասխանությունն անհամեմատ ավելի ցայտուն է «Վեցօրեայի» իններորդ ճառի հետևյալ հատվածում, որը տպագրական հնարավորությունների նկատառումով բաժանել ենք երկու մասի:

Հունարեն բնագիր	Ասորերեն քարգմ.	Հայերեն քարգմ.
<p>Καὶ γάρ σου ἐπαισχυνομαι το εὐαγγελιον. Οὐδε ἐπειση οἱ τα περὶ κόσμου γραψαντες πολλα περι σχημάτων γῆς οὐελεθῆσαν, εἴτε σφαῖρα εἶστιν, εἴτε κύλινδρος,</p>	<p>l' gyr mtkxd 'n' d- 'qbl 'nyn l-m' d-ktb' 'yk d-'myrn 'yk m' d-'mr slyx' d-l' bh't 'n' bh b-'wng-lywn. w-l' hw' twb m'l d-'mrw 'xrn' sgy' l' d-</p>	<p>Եւ ոչ ինչ պակասութիւն համարիմ ընդունել զբանս գրոց բոս իւրաբանչիւր ասացուածի. բոս այնմ՝ զոր Առաքեալ ասէ, թէ Ոչ ինչ ամաշեմ յաւետարանն աստուծոյ²¹, և ոչ դարձեալ, վասն զի ասացին</p>

20 Եսայի Ա 3:

21 Հոովմ. Ա 16:

εἶτε καὶ οὕτω ἐστὶν ἐμ-
 φερτὸς ἢ γῆ, καὶ εὐρεῖται παν-
 τοθεν ἀποστραφένται, ἢ
 λιχνουσίῃς ἐστὶ, καὶ μεσσο-
 χουλος.

[BC 480]

'ytyhwn mn gns' d-
 ywny' w-'l srbh d-'lm'
 ktbw w-'l 'skmh d-'r'
 ršmw 'yk d-sp' lhwn.
 'nxnn mky| btrhwn
 mtngdyn 'nxnn. 'mrw
 gyr mnhwn 'lyh d-'r'
 d-'yk lm 'spr' 'ytyh. w-
 mnhwn 'yk mZRqwt' (?)
 smwh. w-mnhwn 'yk
 pynk' 'mrwh. w-mnhwn
 twb 'mrw d-šwy' hy lm
 mn kwl gbyh lwt 'tr'
 d-b- mš't' 'yk 'skm' lm
 d-|wrnws. w-mnhwn d-
 dmwt' lm d-lqn' (?)
 sqy| 'mrw w-'xrn' twb
 'mrw d-'myqt mš't' hy.

[BM 7 va]

ումանք ի Յունաց այլազգս և
 զճառս աշխարհիս գրեցին և զկեր-
 պարանս երկրի գրողմեցին բառ
 կամաց իւրեանց. ձգիցիմք երբալ
 զհետ լոցա: Քաւգի կէսք այսպէս
 ասացին զերկրէ. թէ զգնդի կեր-
 պարանս ունի, և կէսքն զուղանի
 նմանեցուցին, և կէսքն սկսեղ, և
 կէսքն ասեն՝ թէ հարթ հաւասար
 իսկ է յամենայն կողմանց, և կայ
 ի միշակայրս վայրաց, և նախա-
 բաղազորժ կերպարանաց նման է.
 և կէսքն նքորի նմանեցուցին, և
 ոմանք խորամիջոց անուանեցին:

[ԲԿ 181]

Համադրութեան արտաքին տեսքից արդեն կարելի է նկատել, որ ասորերեն և հայերեն թարգմանութիւնները բավականին ընդարձակ են հունարեն բնագրի համեմատ. վերջինս այս հատվածում պարունակում է ընդամենը 40 բառ, մինչդեռ ասորերեն և հայերեն թարգմանութիւնները՝ համապատասխանաբար 99 և 91: Բավական է նշել, որ հայերեն թարգմանութեան ընդգծված հատվածները, որոնք համարյա բառացի համընկնում են ասորերեն թարգմանութեանը, բացակայում են հունարեն բնագրում:

Հունարեն բնագիր

(προς πασας γαρ ταυτας τας
 υπονοίας οι τα περι του
 κόσμου γραψαντες υπηγε-
 γθησαν, τα αλληλων εκασ-
 τος καταλόντες), ου παρα
 τουτο προαχθησμαι ατιμω-
 τεραν ειπειν την ημετεραν
 κοσμοποιαν, επειδη ουθεν
 περι σχηματων ο του θεου
 θερατων Μωυσης οειλέγη.

[BC 480]

Ասորերեն քարգմ.

w-hnyn hlyn msbrnwth-
 wn d-xkym' d-ywny' xd'
 xd' mnhwn l-npsh l'
 qmt. d-mlyhwn xd' l-xd'
 šry b-klhwn. w-xd mnh-
 wn l-wqbl xbrh tqn ts-
 'yth. 'n' hky| l' mštrgl
 'n' 'p l' mtkxd 'n' d-'mr
 'l 'bydwth d-'lm' 'yk
 m' d-qblt mn ktb' d-'lh'
 w-l-hw 'bd' d-'lh' mwš'.
 l' hw' 'l 'skmwhy d-'lm'
 w-'l' hw' 'l nwsxth 'lpsq
 lh d-n' mr 'l 'l d-'byd' hw
 d-brwyh.

[BM 7va]

Հայերեն քարգմ.

Եւ յայսմ ամենայնէ կարծեացն
 իմաստնոցն Յունաց' և ոչ մի ինչ
 կարաց կալ ի կայի և ունել զանձն
 ի հաստատութեան. զի ամենեցուն
 իւրաքանչիւր բանք զմիմեանս լու-
 ծանեն. զի իւրաքանչիւր ոք ի լու-
 ցանէ ընդդէմ ընկերին պատրաս-
 տեաց զիւր պատմութիւնն: Այլ
 և ոչ յողողողիմ և ոչ պատկանմ
 ինչ՝ ասել զարարածս աշխարհիս
 որպէս ընկալալ յաստուածեղէն
 գրոց և ի ծառայէն աստուծոյ
 Մովսիսէ: Ոչ եթէ կերպարանաց
 և զշափոց աշխարհիս փոյթ եղև
 պատմել, այլ թէ աբարած է՝ ու
 աբարաւ յաբարչէն իւրմէ:

[ԲԿ 181]

Այս հատվածում ևս համեմատվող բնագրերը բովանդակության և ծավալի տեսակետից գտնվում են միևնույն հարաբերակցության մեջ. հունարեն բնագիրը բաղկացած է 36 բառից, իսկ ասորերեն և հայերեն թարգմանութիւնները՝ համապատասխանաբար 68 և 72: Ընդ որում, այստեղ նույնպես հայերեն թարգմանութեան ընդգծված բառերն ու կապակցութիւնները համարյա նույնութեամբ առկա են ասորերեն թարգմանութեան մեջ, սակայն բացակայում են հունարեն բնագրում: Ուշագրավ է նաև հետևյալ մանրամասնությունը. հունարեն բնագրի «οι τα περι του κόσμου γραψαντες» (աշխարհի մասին գրողները)

արտահայտության փոխարեն ասորերեն և հայերեն թարգմանություններում դրված է միևնույն՝ իմաստունին Յունաց (xkyrn' d-ywny') ընթերցվածը:

Ասորերեն և հայերեն թարգմանությունների բնագրական համապատասխանության բաղձաթիվ վկայություններ կարելի է գտնել «Վեցօրեայքի» ութերորդ և իններորդ ճառերի ցանկացած էջում: Ստորև անհրաժեշտաբար նշում ենք ևս մի շարք ցայտուն օրինակներ.

Հունարեն բնագրի «(Ὁ)γα τῆς ἀποστολῆς ἐστὶς αἰῶνα (Տե՛ս հոգու և արշան մերձակցությունը) նախադասության [BC 436] դիմաց հայերեն և ասորերեն թարգմանություններում դրված է հետևյալ ընդարձակ դատողությունը. «Եւ այսու բանիւ շունչն եղև արիւն ի մարմինս անասնոցն, և ել երևեցաւ աշխարհի: նալեաց ընդ կարգս բանիցն և տե՛ս, զի շունչ արիւն անուանեցաւ» [ԲԿ 159. ԲՄ 2րհ]:

Հունարեն բնագրում բացակայում են հայերեն և ասորերեն թարգմանությունների հետևյալ նախադասության ընդգծված բառերը. «Հանգոյց զձեզ և ծով իւրով լուղական դեռնովքն, ուրայս արար զձեզ և օդ իւրով սլացեալ թռչնովքն». իսկ զեռնովքն բառի փոխարեն հունարենում գրված է τῶς ἐχθῆσιν — ձկներով [BC 476. ԲԿ 178. ԲՄ 7րա]:

Հայերեն և ասորերեն թարգմանությունների «Սեղան որ առաջի ձեր կազմեցաւ ընդ առաւօտս՝ աստուածեղէն բանին, որպիսի՞ ինչ արդեւր ձեզ ճաշկեցաւ» նախադասությունը հունարեն բնագրում կաղմված է առանց որ առաջի ձեր կազմեցաւ և աստուածեղէն բառերի [ԲԿ 180. ԲՄ 7րհ. BC 478]:

Հունարեն բնագրի ὁμο νόμου ἀποστολῆς (զիտե՛մ այլաբանության օրենքները) միտքը [BC 478] հայերեն և ասորերեն թարգմանություններում վերարտադրված է. «Ոմանք առ ամբարշտութեան մտաց իւրեանց՝ փոփոխմունս իմն կամեցան մուծանել յաստուածեղէն²² բանս գրոց» [ԲԿ 180. ԲՄ 7րհ]:

Հունարեն բնագրում բացակայում են հայերեն և ասորերեն թարգմանությունների «Այլ մեք այնպէս իմասցուք զգրեալսն, որպէս լսատուծոյ մեզ ականդեցաւ» նախադասության ընդգծված բառերը [BC 482. ԲԿ 182. ԲՄ 7րբ]:

Հունարեն բնագրի ἀποστολῆς ὁ νόμος (զայլը վայրենի է) նախադասությունը [BC 488] հայերեն և ասորերեն թարգմանություններում դարձել է՝ «և զայլ ապստամբ է ի շինոյ և ի հնազանդութենէ ձեռաց մարդկան» [ԲԿ 184. ԲՄ 8րհ]: Ուշագրավ է, որ հայերեն թարգմանության մեջ պահպանվել է նաև ասորերեն բնագրի շէն (=šaynā) բառը:

Հունարեն բնագրի γερμανισμῶν τῶς τῶ ψευδῶς τῆν γλωσσαν ἐχόντες (ստին վարժված լեզու ունեցողները) արտահայտության [BC 514] դիմաց հայերեն և ասորերեն թարգմանություններում դրված է. «Քանզի սուր են լեզուք նոցա ի հայհոյել և կիրթք են միտք նոցա առ ի ստել» [ԲԿ 198. ԲՄ 11րա]:

Հունարեն բնագրի οὗτοι ἐν ἐγγύματι, ἀποστολῆς ἐν τῷ ἰσχυρῶς τῆς θεότητος (ոչ թե մարմնավորի կերպարանքով, այլ աստվածության հատկությամբ) բառերը [BC 518] ասորերեն և հայերեն թարգմանություններում վերարտադրված են մի ընդարձակ պարբերությամբ. «Արդ յորժամ լսեմք զնմանութենէն, մի՛ կարծեսցուք անուամբ զնմանութենէն՝ թէ հասանիցէ աստուծոյ նմանութեանն. և մի՛ իշխեսցուք արկանել ի սիրտս մեր՝ թէ մարդկան կերպարանաց նմանիցէ աստուծոյ նմանութիւնն. այլ ըստ նմանութեան²³ աստուածութեանն, նոյնպէս և նմանութիւն իւր է» [ԲԿ 199. ԲՄ 11րբ]:

22 Յաստուածեղէն բառը ասորերեն բնագրում չկա:

23 Հստ երևույթին այս դեպքում հայերենի նմանութեան բառը պետք է ուղղել բնութեան (= ասորերեն kyānā):

Թվում է, ավելորդ է շարունակել նորանոր հատվածների համեմատական քննությունը, քանի որ կատարված համադրություններն արդեն միանգամայն բավարար են «Վեցօրեայքի» ասորերեն և հայերեն բնագրերի սերտ առնչակցությունը տեսնելու համար: Սակայն բացի բնագրային ընդհանրություններից, որ հիշարկե տվյալ դեպքում ամենակարևորն է, ասորական նախօրինակի օգտին են խոսում նաև «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության իմաստային շեղումների, ոճի, բառապաշարի և այլ առանձնահատկությունների քննության տրված լինելը:

Ուշագրավ է, օրինակ, «Վեցօրեայքի» երկրորդ ճառի հայերեն թարգմանության մեջ տեղ գտած հետևյալ փաստը: Հունարեն բնագրի «Ὅστε καὶ ἔπειτα εἰπερ, καὶ αὐτοὺς, τῶν αὐτῶν ἐρεῖς ἐννοῶν» նախադասության [BC 184] փոխարեն հայերեն թարգմանության մեջ դրված է. «Արդ եթէ օր ասիցես, և եթէ աշխարհ, զնսյն զմին ասիցես» [ԲԿ 41]: Հունարենը բառացի նշանակում է. «Յո ասես, թե հավիտենություն, միևնույն է՝ նույն միտքն ես արտահայտում», այսինքն՝ ժամանակն ինչպես էլ կոչես՝ միևնույն է: Հայերեն թարգմանության մեջ, որտեղ, ինչպես տեսնում ենք, հավիտենություն բառի փոխարեն դրված է աշխարհ, հունարեն բնագրի պարզ միտքը բոլորովին աղավաղված է, որ իր բացատրությունն է գտնում միայն ասորերեն բնագրի միջնորդության հանգամանքով: Թեև «Վեցօրեայքի» երկրորդ ճառի ասորական բնագիրը չի պահպանվել, բայց տարակույս չկա, որ նրանում հունարենի αὐῶν (հավիտենություն) բառը վերարտադրված է եղել՝ ἀλμᾶ բառով, որն ասորերենում հավասարապես նշանակում է և՛ հավիտենություն, և՛ աշխարհ: Հայ թարգմանիչը, ուշադրություն չդարձնելով արտահայտված մտքի նրբերանգի վրա, մեքենաբար ընտրել է այդ նշանակություններից երկրորդը, հանգամանք, որ բացառված է հունարենից թարգմանելու դեպքում:

Բարեբախտաբար այս եզրակացությունը հաստատվում է «Վեցօրեայքի» իններորդ ճառում վկայված միանգամից երկու նույնատիպ դեպքի տվյալներով: Մի դեպքում հունարեն բնագրի τὸς αὐτοὺς ἐπορεύσεν (հավիտենություններն ստեղծեց) նախադասությունը [BC 516] ասորերեն է թարգմանված՝ bad 'enon l-'almē [BM 11va], իսկ հայերեն՝ «արար զաշխարհս» [ԲԿ 198] ձևով, այսինքն՝ հունարեն αὐῶν (հավիտենություն) բառը ասորերենի 'alma (հավիտենություն, աշխարհ) բառի միջնորդությամբ հայերենում դարձել է աշխարհ: Ի դեպ, տվյալ նախադասությունը քաղված է Նոր Կտակարանից²⁴, որի հայերեն թարգմանությունն ունի հունարենին համապատասխանող «զլաիտեանսն աբար» ընթերցվածքը: Իններորդ ճառի մի այլ դրվագում հունարեն բնագրի εὖ αὖ ὁ πρόμας συμπελάσθη (մինչև աշխարհի ավարտումը) արտահայտության [BC 484] դիմաց ասորերեն թարգմանության մեջ դրված է՝ dama l-šūlameh d-'almā [BM 7vb], իսկ հայերենում՝ «մինչև ի կատարումն ժամանակի» [ԲԿ 182]: Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն ընդհակառակն, 'alma բառը հայ թարգմանիչը աշխարհի փոխարեն թարգմանել է ժամանակ: Նշված ասորերեն բառի երկիմաստությունից բխող այս թյուրիմացությունն, ի միջի այլոց, իր դրսևորումն է գտել նաև ասորերենից թարգմանված հայերեն այլ բնագրերում²⁵:

«Վեցօրեայքի» հայերեն թարգմանության մեջ նկատելի է նաև ասորերենի շարադասական և ոճական որոշ յուրահատկությունների արտացոլումը: Օրինակ, երկրորդական նախադասության «արոց ի կորուստ են հրապույրք իւրեանց» [ԲԿ 169] կառուցվածքը, որի բնիկ հայերենը պետք է լիներ «որոց հրապույրք

²⁴ Տե՛ս Եբր. Ա 2:

²⁵ Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան. Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը.— «էջմիածին», 1975, № 9, էջ 52:

ի կորուստ են», ակնհայտորեն փոխառված է ասորերենից²⁶։ Հայերեն բնագրում կարելի է մատնանշել այդ կառուցվածքի գործածության ևս մի քանի դեպքեր, ինչպես. «զոր եղ ի վերայ նոցա կանխաւ բանին իրով զնա» [ԲԿ 1], «որոց յուրախարար հանգիստն իրեանց ծածկեալ կայ գեղ վայելութեան իւրեանց» [ԲԿ 78], «որոց ոչ է շափ ամբարշտութեան իւրեանց» [ԲԿ 134], «որոց բարձան փառք²⁷ իւրեանց» [ԲԿ 145]։ Նույն կառուցվածքը գործածված է նաև. «սեսմ, խօսիմ և պատմեմ բայերի հետ. այսպես, փոխանակ գրելու «զորոց պատմեմ», «Վեցօրեայքի» հայ թարգմանիչը դնում է՝ «զոր պատմեմ զնոցունց» [ԲԿ 48], կամ՝ «զոր առաք խօսել զնմանէն» [ԲԿ 41], «զոր ասացեալն է զնոցանլն» [ԲԿ 62], «զոր արժանատր բանիւք որ պատմեսցէ զնմանէն» [ԲԿ 63] և այլն։ Բացահայտորեն ասորերենից են պատճենված նաև հայերեն բնագրի հետևյալ արտահայտությունները. «գմի մի իւրաքանչիւր կիսոյ» [ԲԿ 28], «մի մի ի գործոց իւրոց» [ԲԿ 64], «ի վերաւ միոյ միոյ կողմանց իւրոց» [ԲԿ 131] և այլն։

Թարգմանական հուշարձանները սովորաբար աչքի են ընկնում ևս մի կարևոր առանձնահատկությամբ. ոորքան էլ թարգմանիչները ձգտում են հարազատ մնալ իրենց մայրենի լեզվին, այնուամենայնիվ նախօրինակի որոշ բաներ կամա թե ակամա թողնում են առանց թարգմանության։ «Վեցօրեայքի» հայերեն բնագրի ըննությունն այս տեսակետից նույնպես ի հայտ է բերում մի շարք հետաքրքիր փաստեր, որոնք մատնում են ասորական նախօրինակի ազդեցությունը։ Հետևյալ վեց ասորական բառերի (բացի, թերևս, երկրորդից) թափանցումը հայոց լեզվի մեջ, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության միջոցով։

Դայծանացիք — «Զի յայսմ բարբառոյ, թէ խաւար ունէր զերեսս անդնդոց, առին սկիզբն սուրբութեան արկանեյ յոգիս մարդկան՝ եթէ մարկիոնեստեայք, և եթէ դայծանացիք²⁸, և եթէ պղտորեալ ուսմունք կողմանն Մանեայ» [ԲԿ 30]։ Հունարեն բնագրում դայծանացիք բառի փոխարեն դրված է Οὐαλεντινοս — Վալենտինյաններ [BC 154], նկատի ունենալով մ. թ. II դարի նշանավոր գնոստիկյան մտածող Վալենտինի²⁹ կողմնակիցներին։ Հայերեն թարգմանության առաջին հայացքից անհասկանալի թվացող քնթեքցվածք բացատրվում է ասորական միջավայրի ազդեցությամբ։ Ասորիների համար գնոստիկյան աստվածների ամենանշանավոր ներկայացուցիչն էր հանդիսանում Բարդաիծան Եղեսացին (մ. թ. 154—222)³⁰։ Այդ պատճառով, պետք է ենթադրել, որ «Վեցօրեայքի» ասորի թարգմանիչը Վալենտինի անունը փոխարինել է ասորիներին հարազատ Բարդաիծանի անունով, բնագիրն այդպիսով ավելի հասկանալի դարձնելով ընթերցողներին։ Այստեղից էլ, ահա ծագում է հայերեն բնագրի դայծանացիք բառը, որը կազմված է Բարդաիծանի անվան երկրորդ բաղադրիչից. Բարդաիծանն ըստ ավանդության ծնվել է Եղեսիայով հոսող Դայծան գետի ափին, այդտեղից էլ ստանալով իր մականունը։

26 Տվյալ կառուցվածքը պատահում է նաև ասորերենից կատարված այլ հայերեն թարգմանություններում, տե՛ս Կցուրդք Ս. Եփրեմի Խորին Ասորույ. հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ա. Կինևան. Վիեննա, 1957, էջ ԻԱ։

27 Տպագրում՝ հստֆ. ուղղումն առաջարկել է Թ. Թոռնյանը. տե՛ս Թ. Թոռնյան. Հատընտիր ընթերցուածք... հ. Բ, էջ 65։

28 «Վեցօրեայքի» վիենտիկյան հրատարակության մեջ դրված է ծայղանձինը։ Ձեռագրերում սխալում են ծայղանձիք, ծայղանացիք, ծայղանացիք, գայծանայք և դայծանացիք ընթերցվածները։ Ձեռագրերի տվյալները մեզ է տրամադրել բանասեր Կ. Մուրադյանը, որին հայտնում ենք խորին շնորհակալությամբ։

29 Վալենտինի մասին տե՛ս Ե. Տեր-Մինասյան. Միջնադարյան աղանդների ծագման և տարգացման պատմությունից. Երևան, 1968, էջ 37—41։

30 Բարդաիծանի մասին տե՛ս նույն տեղում, էջ 56—57։

Կատսայ—«Չիցէ՞ տեսեալ ձեր զկատսայս և զսանս լի ջրով և ուսցուցեալս ի հրատի» [ԲԿ 79] և «Առնուն զջուրս ծովուն զաղին և զգառն, արկանեն ի սանս կամ ի կատսայս, եռացուցանեն, և դենն սպունկս մեծամեծս խուփն կատսայիցն...» [ԲԿ 80]: Հունարեն բնագրում, որի շարադրանքը բավականին տարբեր է հայերեն թարգմանությունից, կատսայ բառի գործածության առաջին դեպքում դրված է նույն նշանակությունն ունեցող $\iota\epsilon\beta\tau\zeta$ բառը, մինչդեռ մյուս երկու դեպքերը շունեն իրենց համապատասխանությունը: Կատսայ բառը, որն, ինչպես «Հայերեն արմատական բառարանում» իրավացիորեն նշում է Հ. Աճառյանը, փոխառված է ասորերեն qadsa-ից, հավանորեն հայերենին է անցել բանավոր ճանապարհով, դեռևս գրերի գյուտից առաջ, քանի որ մոտ երկու տասնյակ անգամ գործածված է Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ:

Շաֆիլ—«Ջի ըստ շաֆիլ արմատոցն ի ներքս՝ նույնպէս գետնատարած ոստըն յամենայն կողմանս առ երկրաւ տարածանին» [ԲԿ 96]: «Նոր հայկազյան բառարանը» նշում է միայն բառի գործածության «Վեցօրեայքի» վկայությունը և ըստ բերված նախադասության մտքի այն թարգմանում՝ «շառաւիղել. ընծիւղիլ, բողբոջիլ, փթթիլ»: Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» շաֆիլ բառը բխեցնում է «Վաստակոց գրքում» վկայված շաֆիլ (ծառի տերևներ) արմատից: Սակայն մեզ թվում է, այս բառը պետք է կապել ասորերեն šaklel (=kal արմատի šaf'el ձևը) բայի հետ, որ նշանակում է ավարտել, կառուցել, վերականգնել, կառարելագործել³¹: Հայերեն թարգմանությունն ըստ այդմ նշանակում է. «երբ արմատները հողում ձևավորվում են, ոստերը նույնպես սկսում են տարածվել»:

Ներաս/Ներաս—«Քանզի յայնմ զեռնոյ որ կոչի շէրաս, այս ինքն կերպասաբեր, գանձէ զվաստակս նոցա ի հանդերձս կակուղս և ի սպասս ազնուականս» [ԲԿ 177]: «Նոր հայկազյան բառարանն» ունի միայն «Վեցօրեայքի» վկայությունը՝ «որդն մետաքսագործ, բոմբիլոս» բացատրությամբ: Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» շէրասի մասին գրում է՝ «փոխառեալ բառ է, բայց յայտնի չէ որ լեզուից», այնուհետև՝ «հայր չի կարող յունարէնից իննել փոխառեալ՝ նախաձայն շ-ի պատճառաւ»: «Վեցօրեայքի» հունարեն բնագրի համապատասխան տեղում դրված է $\tau\alpha \nu\iota\mu\alpha\tau\alpha \iota\epsilon\chi\omega \alpha \pi\acute{\epsilon}\mu\pi\omicron\upsilon\sigma\iota\upsilon \nu\upsilon\iota\upsilon \sigma\iota \Sigma\tilde{\eta}\rho\epsilon\zeta$ (ես խոսում եմ այն թելերի մասին, որ ձեզ են ուղարկում Սերերը) նախադասությունը [BC 472]: Հունարեն բնագրի հրատարակիչ Ս. Ժիեի կարծիքով $\Sigma\tilde{\eta}\rho\epsilon\zeta$ բառի տակ պետք է հասկանալ ասիական մի ժողովրդի, հավանաբար ինասցիներին [BC 473]: Սակայն անկախ բառի ստուգաբանությունից, պարզ է, որ հայերեն շէրասը չէր կարող ծագել հունարեն $\Sigma\tilde{\eta}\rho\epsilon\zeta$ -ից: Հարցը հեշտությամբ լուծվում է «Վեցօրեայքի» ութերորդ ճառի ասորերեն թարգմանության շնորհիվ, որտեղ ունենք միևնույն šeras բառը [BM 6v], այն էլ մի նախադասության մեջ, որը բառացի համընկնում է հայերեն բնագրին. *men lwathên Ծĕr d-hālĕn xayūtē d-metqrĕn šeras...* (=քանզի յայնմ զեռնոյ որ կոչի շէրաս...): Հետագա դարերում հայերենում տարածում գտած շերամ բառն, ըստ Հ. Աճառյանի, առաջացել է շէրասից՝ սխալ ընթերցման պատճառով:

Շումրայ—«Եւ օձից աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտէ շումրայ, այս ինքն է սամիթ վայրենի, և ողջանայ [ԲԿ 186]: «Նոր հայկազյան բառարանը» լուծումը (ուղղելի՛ շումրայ) բառի տակ ունի միայն «Վեցօրեայքի» վկայությունը և թարգմանում է՝ սամիթ վայրի, այսինքն ընդունում է բնագրի տված բացատրությունը: «Վեցօրեայքի» հունարեն բնագրի համապատասխան հատվածում

³¹ Տե՛ս R. and J. Payne Smith. A Compendious Syriac Dictionary, Oxford, 1903.

դրված է *ⲛⲉⲗⲁⲛⲁ* (սամիթ) բառը [BC 492], որից բնականաբար հայերեն շումրայ բառը չէր կարող ծագել: Լ. Աճառյանը «Արմատական բառարանում» այդ բառը դնում է ասորերենից կատարված փոխառությունների շարքում, որ միանգամայն հաստատվում է «Վեցօրեայքի» իններորդ ճառի ասորերեն թարգմանության շնորհիվ, որտեղ դրված է միևնույն *šamāra* բառը [BM 8v]: Հետարրքիր է, որ «Վեցօրեայքի» հայկական ձեռագրերում պահպանվել է նաև բառի նախնական շումրայ ձևը, իսկ ասորերենում այն վկայված է նաև *šumara* ձևով:

Քիստ—«Նու ապա անտի բաժանի ի ցօղն և ի սլատիճ, և ի զոգաձև փոճոկ՝ ցորենոյ, և ի հատ և ի ֆիստ» [ԲԿ 87] և «զարձեալ հատոյն փոճոկս գոգաձև կաղմեաց ի հասկին, և շուրջ պատեալ ամրացոյց ֆատսվ, իբրև ամրածածուկ պատնիշօք» [ԲԿ 88]: «Նոր հայկազյան բառարանը» V դարի հայ մատենագրության մեջ բացի «Վեցօրեայքից» նշում է նաև նփրեմ Ասորու «Պողոսի թղթերի մեկնության» վկայությունը և թարգմանում՝ «փշտեսակ մազք, որք պատեն զհասկ ցորենոյ»: «Վեցօրեայքի» հունարեն բնագրում երկու դեպքում էլ դրված է *ἀνδραγ* (հասկ, ցողուն) բառը [BC 290]: Լ. Աճառյանը «Արմատական բառարանում» բերում է բառի ստուգաբանությանը վերաբերող տարրեր կարծիքներ, որոնցից ոչ մեկը, սակայն, ասորական փոխառության հնարավորությունը չի շոշափում: Այնինչ ակնհայտ է, որ հայերեն ֆիստ-ը ծագում է ասորերեն *kestā* (հարդ) բառից: Այս տեսակետից ուշագրավ է, որ ֆիստ-ը ոսկեդարյան երկրորդ վկայությունը նույնպես արձանագրված է ասորերենից թարգմանված բնագրում՝ նփրեմ Ասորու «Պողոսի թղթերի մեկնության» մեջ:

Բացառված չէ, որ հայերեն բնագրում առկա բրէտ [ԲԿ 175—*būrīte* BM 6r], գգեռեմ [ԲԿ 87], իամծի [ԲԿ 89], խիղբ [ԲԿ 87—ասոր. *xalpa?*], կթուիք [ԲԿ 121], կնձնի [ԲԿ 93] և տուրգ [ԲԿ 121] բառերը, որոնք առայժմ բավարար ստուգաբանություն չունեն, նույնպես փոխառված են «Վեցօրեայքի» ասորերեն թարգմանության միջոցով:

Ասորական նախօրինակի ազդեցությունը բնականաբար իր արտացոլումը պետք է դասեր նաև «Վեցօրեայքի» հայերեն բնագրի աստվածաշնչական վկայակոչումներում, քանի որ թարգմանիչները, որպես կանոն, ոչ թե դրանք քաղում են Աստվածաշնչի պատրաստի թարգմանություններից, այլ վերաթարգմանում հուշարձանի հիմնական բնագրին համընթաց³²: Դա չի վերաբերում, իհարկե, Աստվածաշնչի՝ մասնավորապես ավետարանների և սաղմոսների հանրահայտ դրվագներին, որոնց անգիր իմացությունը թարգմանիչներին հաճախ հնարավորություն էր տալիս պարզապես օգտվելու իրենց հիշողությունից և օտար հուշարձանների աստվածաշնչական քաղվածքների դիմաց դնելու մայրենի բնագրի համապատասխան ընթերցումները: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ հնագույն հայկական թարգմանությունների աստվածաշնչական վկայակոչումները ժամանակի ընթացքում ընդօրինակող գրիչների միջամտությամբ որոշ շափով հարմարեցվել են Աստվածաշնչի հայերեն կանոնական բնագրին³³: Այնուամենայնիվ, չնայած այս վերապահումներին, ցանկացած թարգմանական երկի աստվածաշնչական քաղվածքներում կարելի է գտնել նախօրինակ բնագրի ազդեցության մի շարք նկատելի հետքեր: «Վեցօ-

³² Հմմտ. Լ. Աճառյան. Տիմոթէոս Կուզ և Ս. Գրքի նորաբեր թարգմանությունը.— «Շո-ղակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 1—22:

³³ Հմմտ. Philon d'Alexandrie. Quaestiones et Solutiones in Genesim, I et II, e versione armeniaca. Introduction, traduction et notes par Charles Mercier, „Les oeuvres de Philon d'Alexandrie, publiées sous le patronage de l'Université de Lyon. 34A“. Paris, 1979, p. 34. Գրախոսությունը տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան. Հայագիտական նոր հրատարակություններ.— «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 302—303:

րեայքի» հայերեն թարգմանությունը նույնպես բացառություն չի կսուզում այս տեսակետից: Այսպես.

Օննդ. Ա. 2—«Եւ խաւար, ասէ, ունէր զբերսս անզրնգոց» [ԲԿ 29]: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը (Զոհրապայանի հրատարակություն), հունական Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը զբերսս բառի փոխարեն ունեն ի վերայ (ἐπάνω): Զբերսս ընթերցվածը կա միայն Աստվածաշնչի ասորական Պեշիտտա բնագրում ('al-'apay)³¹:

Մննդ. Ա. 9—«Եւ ասաց, ասէ, Աստուած՝ ժողովեսցին ջուրքն, որք ի ներքոյ երկնից են, ի տեղի մի» [ԲԿ 68]: Զոհրապայանը, Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը ի տեղի ընթերցվածի դիմաց տալիս են ի ժողով (εἰς συναγωγήν), մինչդեռ Պեշիտտան ունի նույն ի տեղի (l-'atā) ընթերցվածը: Ի դեպ, սույն քաղվածքը «Վեցօրեայքի» հայերեն բնագրում բերված է հինգ անգամ [ԲԿ 68, 70, 72, 75], և հինգ անգամ էլ նույն ի տեղի ձևով:

Մննդ. Ա. 11—«Զի տունկ իւր անդստին ի նմին իցէ ըստ ազգի իւրում ի վերայ երկրի» [ԲԿ 92]: Համեմատվող բնագրերի մեջ տունկ բառն առկա է միայն Պեշիտտայում (nešteh), իսկ Զոհրապայանը, Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը նրա փոխարեն ունեն սերմն (σπέρμα):

Մննդ. Ա. 20—«Եւ թուռնս թեւորս ըստ ազգի իւրում ի վերայ երկրի, որ թոհցեն ընդդէմ հաստատութեան երկնից» [ԲԿ 157]: Զոհրապայանը, Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը ունեն ըստ (χατα) ընթերցվածը ընդդէմ բառի փոխարեն. վերջինս կա միայն Պեշիտտայում ('al-'apay):

Թիւք ԺԲ 6—8—«Թէ լինիցի մարգարէութիւն ի մէջ ձեր, եւ Տէր տեսեամր յայտնիմ ձեզ և երազօք խօսիմ. և ո՛չ այդպէս՝ որպէս ծառայն իմ Մովսէս. առ նա յամենայն ի տան իմում հաւատարիմ է. բերան ի բերան խօսիմ ընդ նմա, յայտ յանդիման ճշմարիտ տեսեամր և ո՛չ նմանութեամբք» [ԲԿ 3]: «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության սույն քաղվածքն արդեն Պեշիտտային համընկնում է միանգամից չորս կետում՝ մարգարէութիւն (nbiyūta), եւ Տէր ('ena marya), ալլ ('ela), նմանութեամբք (ba-dmūta): Զոհրապայանը, Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարենը նշված բառերի փոխարեն համապատասխանաբար ունեն՝ մարգարէ (πρόφῃτης), Տեսուն (χαριω), առկալիք (δὲ αὐτοῦ ματῶν), իսկ ալլ բառն այդ բնագրերում ընդհանրապես բացակայում է:

Սաղմ. ԻԳ 2—«Ի ծովու եղ զհիմունս նորոս» [ԲԿ 17]: Պեշիտտան բացարձակապես համընկնում է «Վեցօրեայքի» հայերեն թարգմանությանը՝ b-yama sām šeteseyh, մինչդեռ Զոհրապայանը, Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը նշված նախադասության փոխարեն ունեն՝ «ի վերայ ծովու հիսունս արկ նմա» (ἐπὶ ἡλασσῶν ἐπιμελιώσεν αὐτοῦ):

Նսայի Խ 22—«Ո՞ ձգեաց զերկինս իբրև դկոնք...» [ԲԿ 15]: «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության կողքին միայն Պեշիտտան ունի ձգեաց (mtax) ընթերցվածը. Զոհրապայանը, Յոթնասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը դրա դիմաց տալիս են՝ կանգնեաց (στῆαξ):

³¹ Համեմատությունները կատարված են ըստ հետևյալ բնագրերի. Զոհրապայան—Պայմանականորեն Աստվածաշնչի հայերեն կանոնական բնագիրը (Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց, յաշխատասիրութենէ Լ. Զոհրապեան վարդապետի, Վենետիկ, 1805): Պեշիտտա—Ktābā qadīša d-diatēqē 'atīqta (Vetus Testamentum Syriace), Urmiae 1852; The New Testament in Syriac, London, 1966. Յոթնասնից—Ծննդոց զբքի համար օգտագործել ենք գյոթինգենյան քրնական հրատարակությունը (Septuaginta, Vetus Testamentum Graecum, vol. 1: Genesis, ed. William Wevers, Göttingen, 1974), Հին Կտակարանի մյուս զբքերի համար Ա. Ռալֆսի հրատարակությունը (Septuaginta, ed. A. Rahlf, Stuttgart, 1935), իսկ Նոր Կտակարանի՝ 'H Kαὶνὴ Διαθήκη, Text with critical apparatus, ed. E. Nestle, London, 1910.

Հոովմ. Ա 20—«Աներևոյթն Աստուծոյ յերևելի արարածոց աստի իմացեալ տեսանին» [ԲԿ 11]: Զոհրայանը, Յոթանասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը ունեն նորա (α) (α) ընթերցվածը՝ Պեշիտտայի և «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության Աստուծոյ (d-’ālahā) բառի փոխարեն:

Երբ. ժԱ 25—«Լաւ և պատշաճ համարէր՝ ի նեղութեանն ընդ Աստուծոյ ժողովրդեանն ի նեղ» [ԲԿ 2]: Ի նեղութեանն... լինել ընթերցվածը կա միայն «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության մեջ և Պեշիտտայում (b-’ū:sānā...nehwē): Զոհրայանը, Յոթանասնիցը և «Վեցօրեայքի» հունարեն բնագիրը դրա փոխարեն տալիս են՝ շարշարել (շարշարել):

Եթե խոսքը վերաբերեր «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության աստվածաշնչական բաղվածքների և Պեշիտտայի համապատասխանության մի բանի մասնակի դեպքերի, ապա նրանց առկայությունը կարելի էր բացատրել Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանության ազդեցության հանգամանքով³⁵, Սակայն հաշվի առնելով այն, որ «Վեցօրեայքի» բնագրում աստվածաշնչական ուղղակի մեջբերումները մեծ թիվ չեն կազմում (մոտ 100 դեպք), և ըստ այդմ հայ-ասորական ընդհանրությունները նրանցում զգալի տեղ են զբաղեցնում (մոտ 10 տոկոս), ուստի վերջիններս «Վեցօրեայքի» ասորական թարգմանության ազդեցության հերթական դրսևորումներից մեկը պետք է համարել:

Բերված փաստերը, մեր կարծիքով, ավելի քան բավարար հիմք են տալիս պնդելու, որ «Վեցօրեայքի» հայերեն թարգմանությունը կատարված է ոչ թե հունարենից, այլ ասորերենից: Սակայն հնարավոր տարակուսանքները փարատելու համար հարկ է անդրադառնալ նաև հունական նախօրինակի տեսակետը պաշտպանող բանասերների փաստարկներին, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կետերում.

ա. Որքան էլ հայերեն թարգմանությունը շեղվում է հունարենից, այնուամենայնիվ բաղմամբիվ են այն էջերը, որտեղ թարգմանիչը «խղճմտօրէն կը հետևի բնագրին գրեթէ բառ առ բառ, մանաւանդ երբ աստուածաբանական և բընազանցական խնդիրներու վրայ ըլլայ խօսքը»³⁶, կամ՝ «Կան բաղմամբիվ էջեր, որոնցում հայերեն թարգմանությունը գերծ է թարգմանչի միջամտությունը՝ ընդմիջարկություններից, և բնագրային բաղմամբիվ բացատրություններ նույնությամբ են թարգմանվել հայերենի»³⁷:

բ. Հայերեն թարգմանությունը պարունակում է կենդանաբանության և բուսաբանության բնագավառին վերաբերող բաղմամբիվ «հունարեն բառեր, որոնց հայերեն համարժեքները չգտնելու, գուցե և չնախընտրելու պատճառով թարգմանիչը դրանք նույնությամբ փոխանցում է հայերենի»³⁸, ինչպես օր. 190—սխիւնս, շծոսոս—կիկնոս, շծոսոս—կոնիոլն և այլն.

գ. Հայերեն թարգմանության մեջ կան հունարեն նմանագիր կամ նմանահունչ բառերի սխալ ընթերցման հետևանքով առաջացած վրիպումներ, ինչպես նաև առանձին դեպքեր, երբ թարգմանիչը, չընկալելով բնագրի հոդերն ու շաղկապները, դրանք դիտել է իբրև բառամաս և տառադարձել հայերենի³⁹: Այսպես, բւժոսոս (ցօղուն) բառը սխալմամբ ընթերցվել է բւժոսոս և թարգմանվել կորիւն, ծե շաղկապը միացվել է հաջորդող շաղկապ բառին և տառադարձվել դեզաղք, ի հողը ընթերցվել է փոյոյ գոյականի հետ ու դարձել ելիենէ, օր. 190—

35 Հայտնի է, որ V դարի հայ թարգմանական և ինքնուրույն գրական հուշարձաններում բաղմամբիվ հետքեր են պահպանվել Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանությունից, որը մասամբ իրագործված էր ասորերեն, մասամբ հունարեն բնագրերի հիման վրա:
36 Է. Ռոբոսյան. Ս. Ռարսեղ Կեսարացի..., էջ 333:
37 Կ. Մուրադյան. Ռարսեղ Կեսարացի..., էջ 198:
38 Նույն տեղում, էջ 193:
39 Նույն տեղում, էջ 191:

բառի հոգնակիությունը չի գիտակցվել և այն վերարտադրվել է դրակոնտէս ձևով և այլն:

Փաստարկներից առաջինն ավելի երևույթի քան ապացույցի բնույթ ունի. «Վեցօրեայքի» հունարեն և հայերեն բնագրերի տարբերություններն այնքան էական են, ոտ երբ հետազոտողը հանդիպում է քիչ թե շատ համընթաց էջերի, ուշադրություն չդարձնելով մանրամասների վրա, ստանում է այն տպավորությունը, թե հայերեն թարգմանությունը համարյա բառացի համընկնում է հունարենին: Սակայն իրականում «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության մեջ հնարավոր չէ գտնել թեկուզ հինգ տողանոց մի հատված, որը բացարձակորեն համընկնի հունարեն բնագրին: Խոսքն, իհարկե, վերաբերում է այնպիսի բացարձակության, ինչպիսին դրսևորված ենք գտնում հայերեն և ասորերեն բնագրերի վերը բերված ընդարձակ համեմատություններում:

Երկրորդ փաստադր միանգամայն համապատասխանում է իրականությանը. «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության մեջ իսկապես կան կենդանաբանության և բուսաբանության բնագավառներին վերաբերող բազմաթիվ հունարեն բառեր: Եթե գոյություն չունենար ասորական բնագիրը, ապա այս հանգամանքը հազիվ թե կարելի լիներ բացատրել այլ կերպ քան այն, որ «Վեցօրեայքի» հայերեն է թարգմանվել հունարենից: Սակայն «Վեցօրեայքի» ութերորդ և իններորդ ճառերի բնությունը ցույց է տալիս, որ բոլոր այն հունարեն բառերը, որոնք կան հայերեն թարգմանության մեջ, նույն ձևով կան նաև ասորերեն բնագրում: Այսպես.

շի.շսօս	[BC 456]	—'a'qu'ün [BM 4rb, 5ra]	—աղկիովն [ԲԿ 169, 170]
շսշս	[BC 470]	—qūqnōs [BM 6va]	—կիկնոս [ԲԿ 175]
ւծւծ	[BC 472]	—hinduyā [BM 6va]	—հնդիկ որդն [ԲԿ 176]
թօթսւս	[BC 472]	—bōnbūlyōs [BM 6vb]	—բոմբիլոս [ԲԿ 176]
Տիթս	[BC 473]	—šeras [BM 6vb]	—շերաս [ԲԿ 177]
թլթս	[BC 490]	—plōmos [BM 8va]	—փղումոս [ԲԿ 186]
բիտս	[BC 490]	—pltu' [BM 8vb]	—պիտոս [ԲԿ 186]

Ընդ որում, աղկիովն բառը հայերեն և ասորերեն բնագրերում գործածված է շորսական անգամ, իսկ հունարենում՝ երեք: Կիկնոս բառը նույնպես հայերեն և ասորերեն բնագրերում վկայված է երկուական անգամ, մինչդեռ հունարենում՝ մեկ:

«Վեցօրեայքի» ասորական բնագրի պահպանված մասերը հնարավորություն են տալիս լուսաբանելու նաև հունական նախօրինակի տեսակետն առաջ քաշող բանասերների երրորդ փաստարկը: Ինչպես վերը նշվեց, հունարեն բնագրի [BC 460] φήγγι (գետարծիվ) բառի ղ հոգը համարվել է բառամաս և հայերեն թարգմանության մեջ վերարտադրվել եփեկն է ձևով [ԲԿ 170]: Սակայն բառը 'epenē ձևով է տառադարձված նաև ասորական բնագրում [BM 5rb], ուստի այդ թյուրիմացությունն առաջացել է ոչ թե հայ, այլ ասորի թարգմանչի մեղքով: Այսպիսով, ութերորդ և իններորդ ճառերի հայերեն թարգմանության մեջ չկա որևէ հունաբանություն, որը չլինի նաև ասորական բնագրում, իսկ դա հիմք է տալիս պնդելու, որ մյուս ճառերում նկատվող հունաբանությունները ևս հայերենին պետք է անցած լինեն ասորական բնագրի միջնորդությամբ:

Եվ վերջապես, «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության նախօրինակի հարցի բնությունն տեսակետից անհրաժեշտ է հաշվի նստել նաև միջնադարյան հայկական ձեռագրերում պահպանված երկու վկայությունների հետ, որոնք անմիջականորեն առնչվում են տվյալ խնդրին. Վիեննայի Մխիթարյան հավաքածուի № 249 (1720 թ.) և № 612 (1821 թ.), ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 5686 (1820 թ.) և № 10258 (1820 թ.) ձեռագրերում Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» խորագիրը վկայում է. «քարգմանեցեալ յունականէն ի հայկական բարբառ ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչաց մերոց

և դադափարութեամբ հասեալ և այսր»⁴⁰: Եթէ սույն տեղեկութիւնը պահպանված լինէր «Վեցօրեայքի» հնագույն ընդօրինակութիւններում, ապա թերևս կարելի էր կարևորութիւն տալ նրան, իսկ իրերի ներկա դրութեամբ այն պետք է համարել ուշ շրջանի մի գրչի ենթադրութիւնը: Գիտենալով, որ Բարսեղը հունարի հեղինակ է, գրիչը շէր կարող մտածել, որ նրա երկը կարող էր թարգմանված լինել այլ լեզվից⁴¹: Տեղեկութիւնը վստահութիւն չի ներշնչում նաև այն պատճառով, որ համարյա նույնութեամբ կրկնված է նաև Բարսեղ Կեսարացու «Հարցողաց դրքի» ընդօրինակութիւններից մեկի խորագրում. «Թարգմանեցեալ ի յունականէն ի հայս ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչացն մերոց և գաղաբարութեամբ հասեալ առ մեզ»⁴²:

«Վեցօրեայքի» նախօրինակին վերաբերող միջնադարյան երկրորդ վկայութիւնը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի N 1560 (1282 թ. առաջ) ձեռագրի՝ Մխիթար Այրիվանեցու ճառընտրի 976ա էջի լուսանցքում. «Հ. օրեայ գիրգս Բ թարգմանչաց է յարինած. վասն որո ուրոյն ուրոյն են»⁴³: Գծվար է որոշակի գնահատական տալ նշված տեղեկութեանը: Հ. Տաշյանը նրկատի ունենալով այն, գրում է. «Բարսեղի բուն գործքն ասորի բնագրի մը հետքերը շատ յաճախ կը ցուցնէ. արդէն՝ ըստ ասանդելոյն՝ երկու թարգմանութիւնք եղած են»⁴⁴: Կ. Մուրադյանն իրավացիորեն նշում է, որ Մխիթար Այրիվանեցու տեղեկութեան «միտքը կարող է երկակի մեկնաբանվել՝ «Վեցօրեան» երկու անկախական թարգմանութիւն է ունեցել, կամ միակ թարգմանութիւնը երկու թարգմանիչներ են իրացրել»⁴⁵: Պարզ է միայն մի բան. բոլոր պահպանված ձեռագրերն ու Եզնիկի, Շիրակացու և միջնադարյան մյուս հեղինակների կատարած մեջբերումները ներկայացնում են Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» միայն մեկ՝ մեղ հասած բնագիրը, որը, ինչպես փորձեցինք ասացուցել սույն աշխատութեան մեջ, հայերեն է թարգմանվել ասորերենից:

Բարսեղի «Վեցօրեայքն», աչսպիսով, թե՛ թարգմանութեան ժամանակի և թե՛ պատմական հանգամանքների առումով տեղ է գրավում նվազագույն Կե-

40 Հմմտ. Հ. Տաշյան. Ցուցակ..., էջ 638:

41 Նման թյուրիմացութիւնը երկու փաստ չէ հայ մատենագրութեան համար. «1724 թ. մատենագիտական ցանկում», օրինակ, «Վկայք Արեւելից» ժողովածուն ներկայացված է որպես պարսկերենից կատարված թարգմանութիւն. մինչդեռ հայտնի է, որ այն հայերեն է թարգմանվել ասորերենից. տե՛ս Հ. Անասյան. Հայկական մատենագիտութիւն (Կ—ԺԸ դդ.). հ. Ա, Երևան, 1959, էջ LVI:

42 Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. հ. 3, Երուսաղեմ, 1963, էջ 20:

43 Հմմտ. Գ. Հովսեփյան. Խաղբակեանք կամ Պողոսեանք Հայոց պատմութեան մէջ. Անթիլիաս, 1969, էջ 210, 396: Նույն լուսանցագրութիւնը կա նաև Վիեննայի Մխիթարյան հավաքածուի N 217 ձեռագրում. տե՛ս Հ. Տաշյան. Ցուցակ..., էջ 555:

44 Հ. Տաշյան. Ցուցակ..., էջ 639:

45 Կ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացի..., էջ 187: Երկու թարգմանիչների հնարավորութեան մասին Կ. Մուրադյանն ունի նաև հետևյալ դիտողութիւնը. «Անկյուրիայի ս. Աստվածածին վանքում 1703 թվականին ընդօրինակված մի գրչագիր ժողովածուում պահպանվել է հետևյալ հիշատակութիւնը. «Նւ արար մեկնիչ մի այլ ի Զ օրեայ գրոյն Բարսեղի Կեսարացույն: Եւ դայն Գ գիրքն թարգմանեաց նոյն վարդապետն ի մեր լեզուս»...: Ասվածը «Վեցօրեայի» սասնակի թարգմանութեան մասին մեզ ծանոթ միակ տեղեկութիւնն է» (տե՛ս նույն տեղում, էջ 197): Սակայն այս տեղեկութիւնը քաղված է XVII դարի մի մատենագիտական ցանկից և վերաբերում է Բարթողիմեոս Մարաղացու «Վեցօրեայքին» ու նրա թարգմանիչ Հակոբ Քոնեցու (տե՛ս Հ. Անասյան. Հայկական մատենագիտութիւն. հ. Ա, էջ LVIII):

սարացու «Եկեղեցական պատմության» կողքին, որպես մեկը հունա-բյուզանդական գրականության այն հուշարձաններից, որոնք Հայաստան են թափանցել Ասորիքի ճանապարհով: Մրանով մեկ անգամ ևս հաստատվում է այն իրողությունը, որ ասորերենից կատարված թարգմանությունները, հետևաբար ասորական մշակույթի ազդեցությունը Հայաստանում նախորդել են հունարենից կատարված թարգմանություններին և հունական քրիստոնեական մշակույթի ազդեցությանը: Մյուս կողմից, այս փաստը հնարավորություն է տալիս լույս սփռելու նաև ասորագիտության համար ոչ պակաս հետաքրքրություն ներկայացնող մի հարցի՝ «Վեցօրեայրոն» ասորերեն թարգմանության թվագրման վրա: քանի որ հայերեն թարգմանությունը կատարվել է V դարի առաջին կեսին, հավանաբար 420-ական թթ., ապա ասորերեն թարգմանությունը արգեն դարասկզբին պետք է գոյություն ունեցած լիներ:

АРХЕТИП АРМЯНСКОГО ПЕРЕВОДА
«ШЕСТОДНЕВА» ВАСИЛИЯ КЕСАРИЙСКОГО

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

(Резюме)

«Шестоднев» Василия Кесарийского (IV в.) занимает особое место в армянской переводной литературе, обусловленное важной его ролью в развитии естествознания и космографии в средневековой Армении. По единогласному мнению исследователей, которое подтверждается текстологическим анализом памятника, армянский перевод «Шестоднева» выполнен в первой половине V в., точнее—в 420-х гг. Мнения ученых расходятся в вопросе о языке архетипа армянского перевода. Многие склонны считать, что труд Василия Кесарийского переведен на армянский с греческого. Однако сравнение армянского текста с полученной нами из Британского Музея фотокопией сирийской рукописи № 17143 показывает, что армянский перевод «Шестоднева» выполнен на основе сирийского текста.